1. <<Էդ-Շին>> ՍՊԸ-ն չհիմնավորված ցածր գնի առաջարկի վերաբերյալ չի ներկայացրել լրացուցիչ հիմնավորումներ ինչը հակասում է <<Կարգ>>-ի 47 կետի 3-րդ ենթակետի դրույթներին
2. <<Մասնակցության իրավունքի>> չափանիշներով <<Էդ-Շին>> ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է ոչ ճիշտ տվյալներ Ֆին նախարարության եզրակացության համաձայն <<Էդ-Շին>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ
3. <<Մասնագիտական գործունեության համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործենությանը>> չափանիշի առումով <<Էդ-Շին>> ՍՊԸ-ն հայտ ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված պայմանագրի կատարման վերաբերյալ հիմնավորում չի ներկայացրել <<Կարգ>>-ի 64 կետի 1-ին ենթակետի համապատասխան
4. <<Մասնագիտական փորձառություն>> առումով <<Էդ-Շին>> ՍՊԸ-ն չի ներկայացրել հիմնավորող փաստաթղթեր՝ աշխատանքի կատարման պայմանագրի և աշխատանքների ժամանակին կատարումը հավաստող հանձնա-ընդունման ակտերի պատճենները:

   Կատարվեց մտքերի փոխանակում:

   Հանձնաժողովը փաստաթղթերի փաստացի ուսումնասիրության և գնահատման թերթիկների արդունքում՝

   6 կողմ դեմ 0 ձեռնապահ 0

Հարաբերակցությամբ <<Էդ-Շին>> ՍՊԸ-ի հայտը համարելով ոչ բավարար *որոշեց*

1. <<*ԳՀՊԸԱՇՁԲ-2016/3* >> ծածկագրով առաջին տեղ զբաղեցրած <<Էդ-Շին>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 47 կետի 3-րդ ենթակետի և 48 կետի հիմքերով
2. Հայտը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու առաջարկ ներկայացնել երկրորդ տեղը զբաղեցրած <<Բալահովիտ 1>> ՍՊԸ-ին
3. Տեղեկատվություն ներկայացնել Ֆին նախարարություն եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը իրականությանը չհամապատասխանելու վերաբերյալ
4. Հայտի գնահատման նիստ հրավիրել <<Բալահովիտ 1>> ՍՊԸ-ից անհրաժեշտ հիմնաորող փաստաթղթեր ներկայացնելու հաջորդ օրը:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Վարդանյան

Անդամներ Վ. Հովհաննիսյան

Վ. Լևոնյան

Ռ. Սարիբեկյան

Ս. Հարությունյան

Ռ. Հովհաննիսյան

Քարտուղար Լ. Թադևոսյան